ժողովուրդը գոնէ մի կերպ և առժամանակ պաշտպանում էր անհատական քաջերով։ Դոցանից մի երկուսի լիշատակը աւանդութիւնը վառ է պահել՝ Աւագ վարդապետ և Նորա ընկեր «աւազակ» Արզումանը կամ ժողովրդի ասածով՝ դալի-Մահրասան և Թիւլի-Արզումանը, որոնք ժողովրդի կողմից վրէժխնդիր էին լինում Իբրահիմ խանին թուրքեր կոտորելով, կազմակերպւած լինելով որպէս մի աւազակային խումբ։ Լէօի «Սպանւած հայրը» այդ աւանդութիւնն է պատմում։ Սպանւողը այդտեղ Արզումանի ծերունի հայր Սարգիս-աղերն է, որին Իբրահիմ խանը կալանաւորել էր տւել և խոստացել՝ ազատ թողնել, որ գնա ու խրատի իւր որդուն՝ հանգիստ կենալ. բայց Նորան կոտորկոտոր է անել տալիս, երբ այդ հայրը հրաժարւում է Արզումանին իւր որդի անւանելուց, ասելով որ եթէ սա իւր արժանի որդին լինէր՝ Իբրահիմը խան չէր լինիլ։

Պատմւածքը շատ լաջողւած է։

Ա. Ա.

---

ՇՁԵԴՐԻՆ. —«ԳԻՒՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒՀԻ»։ Թարգման. Խ. Մ., Թիֆլիս, 1891 թ. տպարան «Արօր», 24 երես. գինն է 5 կոպէկ։

---

Օրիորդ Աննա Գուբինան, ստանալով ուսուցչական վկայական, ամսական 15 ռուբլիով գիւղական վարժուհու պաշտօն գտաւ։ Հէնց առաջի օրերին, գիւղի հարուստներից մէկը՝ Դրոզդը, որը խմիչքեղէնների առևտուր էր անում, եկաւ ուսումնարան, բերելով օրիորդի համար ընծայ. չը կամենալով զայրացնել այդ աղդեցիկ մարդուն, օրիորդը ընդունում է Նորա բերածը։ Դրոզդը երես է առնում, սկսում է դիմել օրիորդին երկդիմի ակնարկութիւններով, «իսկ մի անդամ էլ Դրոզդը օրիորդի ականջով գցեց.—Էհ, օրիորդ, օրիորդ, ձեր քաշովը մի ոսկի կը տալի, եթէ»... Նոյնքան աներես է և գիւղական գրագիրը, բայց օրիորդը տանում է այդ բոլոր անպատւութիւնները, վախենալով զրկւել իւր տեղից։ «Ապրիլ ամսին իւր գիւղական կալւածքը եկաւ կալւածատէր Անդրէաս Ագին, որը միևնոյն ժամանակ ուսումնարանի գլխաւոր հոգաբարձուն էր։ Գիւղ գալու հէնց առաջի օրը Ագինը գնաց դպրոց .այցելութեան, տեսաւ դպրոցը, հաւանեց, գովեց կարդ ու կանոնը։ Դպրոցից դուրս դալիս, Ագինը ուղղակի ասաց, թէ ինքը շատ ուրախ է, որ իւր դպրոցում այդպիսի սիրուն վարժուհի կայ։ Այդ օրից սկսած, երիտասարդ հոգաբարձուն մաշում էր դպրոցի չէմքը», նա այցելում է մի անդամ օրիորդին և Նորա բնակարանում և նոյն օրը երեկոյեան հրաւիրում է Նրան թէյի. օրիորդը սկսում է գնալ դալ, բայց Նորա «պատմութիւնը» երկար չը քաշեց՝ դալթակղեցուցիչը շուտով հեռանում է գիւղից, թողնելով օրիոր

դին գիւղացիների ծաղր ու ծանակի առարկայ։ «Աչակերտներն էլ գլխի ընկան, թէ բանը ինչումն է. նրանցից մի քանիսը պարզ կերպով ասում էին. «չնորհաւոր լինի պտուղդ»։ Վարժուհու դրութիւնը անտանելի էր դարձել. «օրիորդի համար դեռ մի ելք կար.—մանել գիւղի գրագրի, Միրզայի, Դրոդդի կամ մի ուրիշ ազդեցիկ մարդու հովանաւորութեան տակ». բայց նա սարսափում էր այդ մտքից և գտաւ մի ուրիշ ելք՝ նա վերջ դրեց իւր կեանքին։

Օրիորդ Գուբինայից առաջ նոյն գիւղում վարժուհի էր օրիորդ Մարիամը. ուզում էին նոյնպէս վարել և դորա հետ, բայց օրիորդը պահեց իրան աւելի արժանի կերպով։ Դրանից յետոյ «Դրոդդը սկսեց վարժուհու դէմ մատնութիւններ անել և ինչ մատնութիւններ. էլ ուրիշ ճար չը կար. մնում էր վեր կենալ և հայդէ»։ Օրիորդն էլ այդպէս արաւ. նա փոխադրուեց քաղաք։

Եթէ մէկը դատելու լինի Ռուսաստանի գիւղական վարժուհիների դրութեան մասին այս գրքի հիման վերայ, ահա ինչ եզրակացութիւնների նա պէտք է հասնի. 1) իւր պատիւը ճանաչող ոչ մի օրիորդ վարժուհու պաշտօնով չի կարող մնալ գիւղումը. նա ստիպւած կը լինի փոխադրուել քաղաք. 2) թոյլերին մնում է ընկնել բարոյապէս և, եթէ նրանց մէջ ամօթ կայ, նետուել ջուրը. 3) իսկ ով աստուածային այս տուրքից էլ է զրկւած և նա ցանկանում է վարժուհի մնալ, պէտք է մտնի գիւղի ազդեցիկներից մէկի անպատւաբեր հովանաւորութեան տակ։

Այս գրքոյկը մի աննրելի զրպարտութիւն է հազարաւոր այն գիւղական վարժուհիների համար, որոնք տարիներով գիւղերում վարժուհութիւն են անում և, չը բաւականանալով դասարանական պարապմունքներով, աղնւաբար մաքառում են ժողովրդի տգիտութեան դէմ, աշխատելով բարոյապէս ազդել գիւղի հասակաւորների վերայ։ Ի սէր Աստուծոյ նկարագրեցէք իրերի իսկական դրութիւնը, իսկական արդելքները, բայց մի՛ զրպարտիր։

Եւ թարգմանիչը կարծում է, որ իւր պատիւը ճանաչող մի օրիորդ, եթէ հաւատալու լինի վերև նկարագրած սարսափներին, կը ցանկանայ գիւղական վարժուհի դառնալ։ Մեր ժողովրդական ընթերցանութեան համար նշանակւած հրատարակութիւնների չարքում այս գրքոյկը աննպատակ է և ոչ ցանկալի։

Բ.